

Հիմնադիր ԵՎ Հրատարակիչ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱԺԱԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003^{Թ.}
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան,
Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730: Գինը՝ 100 դրամ



ՍՅՈՒՆԻՅԱՑ
ԴԱՇԻՆՔ

Սյունյաց երկիր

Հիմնադրվել է 23 ՄԱՐՏԻ 2017Թ.
№ 14 (432)

www.syuniacyerkir.am

ԱՂԱՍԻ ՀԱԿՈՒԲՋԱՆՅԱՆ. «Միայն ուժեղ համայնքով կարելի է պեպուությունը հզորացնել»

Հարցազրույց թիվ 12
ընտրատարածքում ՀՀ ԱԺ
պատգամավորի թեկնածու
Աղասի Հակոբջանյանի հետ

Բավականին մրցունակ թիմով թիվ 12 ընտրատարածքի ընտրողներին եւ ընդհանրապես բնակչությանը ներկայացած «Ծառուկյան» դաշինքի պատգամավորի թեկնածուներից է Աղասի Մամիկոնի Հակոբջանյանը, ով ճանաչված անուն է ամբողջ հանրապետությունում: Նախընտրական քարոզարշավի շրջանակում մեր հերթական հանդիպումը նրա հետ էր: Վերջին ութ տարում, լինելով Սիսիան համայնքի ընտրյալ ղեկավար, քանիցս հյուրընկալվել է «Սյունյաց երկիր» թերթի էջերում եւ ներկայացրել ոչ միայն մեր ընթերցողին մտահոգող հարցերի պատասխանը, այլեւ իր փնտրելի հայրենի հանրապետության, նաեւ Սյունիքի մարզի ու հարկապես Սիսիանի փարածաշրջանի զարգացման ընթացքի, հիմնախնդիրների վերաբերյալ:

Արդ՛ն Հակոբջանյան, 2015-ի ծնունդ-գարնան ընթացքում ԲՀԿ-ի հետ տեղի ունեցած պատմությունից եւ Գագիկ Ծառուկյանի հետ կատարվածից հետո ԲՀԿ

խորհրդարանական խմբակցության շատ անդամներ այլ խմբակցություններ տեղափոխվեցին, որոշ ԲՀԿ-ականներ էլ կուսակցությունից դուրս եկան...

Դուք ի՞նչ պահվածք ունեցաք քաղաքական վայրիվերումների այդ ընթացքում:

– Ժամանակին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ եմ դարձել Գագիկ Ծառուկյանի առաջարկությամբ եւ նրա հետ համաձայնեցված ու համատեղ գործունեություն ծավալել: Հայտնի դեպքերից հետո, երբ նա հրաժարվեց կուսակցությունը գլխավորելուց, բնականաբար ես նույնպես պետք է հրաժարվեի: Իմ խորին համոզմամբ՝ Ծառուկյանի՝ քաղաքականությունից հեռանալուց հետո իմ կայացրած որոշումը ճիշտ էր եւ օրինակալի: Ու դրանից հետո զբաղվել եմ միայն քաղաքապետի պարտականություններս կատարելով:

– Մինչեւ 2015-ի՝ վերը նշված ժամկետը ԲՀԿ Սիսիանի կառույցն այդ կուսակցության տարածաշրջանային ամենամարտունակ ջոկատներից էր՝ երիտասարդական հիմնալի թեւով: Հիմա՝ Գագիկ Ծառուկյանի վերադարձից հետո, ի՞նչ վիճակում է ԲՀԿ Սիսիանի կազմակերպությունը:

– Պետք է ասեմ, որ բավականին դրական արձագանք ունեցավ Գագիկ Ծառուկյանի վերադարձը քաղաքական դաշտ, ոգեւորության ալիք բարձրացավ թե՛ տարեցների, թե՛ երիտասարդների շրջանում: ԲՀԿ Սիսիանի կազմակերպությունը կարծես նոր շունչ ստացավ՝ դառնալով նախկին մարտունակ թիմը, նույնիսկ համալրվեց, եւ շարունակվում է կուսակցության շարքերը մտնելու դիմումների ընդունումը: Կարելի է ասել, որ այս ժամանակահատվածում հարաբերական դադարի մեջ էինք եւ այսօր մեծ թափով կրկին մասնակցում ենք նախընտրական գործընթացներին:

– Ընտրողներից ոչ բոլորն են հասկացել՝ ինչն է 2015-ին Գագիկ Ծառուկյանը նա-



Հարցազրույց օրվա խմբագրի

ՍՆՏԵՆՍ
Ծնվել է 1958թ. հունվարի 1-ին ՀՀ Սյունիքի մարզի Տոլորս համայնքում:
1964-1972թթ. սովորել է Տոլորսի ութամյա դպրոցում, այնուհետեւ՝ մինչեւ 1974թ.՝ Սիսիանի N1 միջն. դպրոցում:
1974-1975թթ. աշխատել է Սիսիանի N 6 գյուղապետարանում՝ բանվոր:
1975-1980թթ. սովորել է Երևանի Կ.Մարքոսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, ավարտել ինժեներ-էլեկտրիկի որակավորմամբ:
1980-1982թթ. աշխատել է Հայգյուղտեխնիկայի Սիսիանի արտադրական միավորման ինժեներ: Այնուհետեւ՝ 1982-1983թթ. եղել է տեղամասի պետ Սիսիանի մելիորատիվ կայանում, 1983-1984թթ.՝ դարձյալ Հայգյուղտեխնիկայում՝ բրիգադավար:
1984-1986թթ. աշխատել է Էներգոսկզբնական Սիսիանի տեղամասի պետ: 1986-1992թթ. եղել է Սիսիանի էլցանցի, 1992-1996թթ.՝ Սիսիանի շրջանային կապի հանգույցի տնօրենը, 1996-2008թթ.՝ «Արմենտել» ՓԲԸ Սիսիանի տարածաշրջանի բաժնի պետը:
2008-16թթ. Սիսիան համայնքի ղեկավարն էր:
Ամուսնացած է, ունի մեկ որդի, երեք դուստր, երկու թոռնիկ:

Նախընտրական ծրագրից



«Ծառուկյան» դաշինքի 15 առաջնահերթ քայլերը

1. Միջին կենսաթոշակի չափը համապատասխանեցնել նվազագույն կենսապահովման զամբյուղին: Այն բարձրացնել 25 հազար դրամով եւ պարբերաբար ինդեքսավորել:
2. 2018 թվականի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձը սահմանել 80 հազար դրամ:

3. Առաջիկա երեք տարիներին փոքր եւ միջին ձեռնարկություններն ազատել հարկերից:
4. Առաջիկա հինգ տարիներին մինչեւ 30 մլն ՀՀ դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտներին ազատել հարկերից, այդ թվում՝ պետական ռեզիստորում որպես Ա/Հ կամ իրավա-

- բանական անձ գրանցվելու պարտավորությունից:
5. Հարկային պարտավորությունների չկատարման հետևանքով կուտակված շուրջ 60 մլրդ ՀՀ դրամ տույժերի եւ տուգանքների մասով կիրառել հարկային համաներում:
 6. Պետության կողմից վարկավորել եւ խրախուսել գյուղատնտեսական արտադրությանը զբաղվող անհատներին եւ ընկերություններին: Գյուղատնտեսական վարկերի տոկոսը չպետք է գերազանցի 3-5 %-ի շենը:
 7. «Ծառուկյան» դաշինքի կողմից ձեւավորվող նոր կառավարության առաջին որոշումը լինելու է արագաչափերի եւ

8. Սառեցնել հանրային դժգոհություններով ընդունված կուտակային կենսաթոշակային համակարգի գործունեությունը եւ դրան ուղղված պետական բյուջեի տարեկան 28-30 մլրդ ՀՀ դրամի հասնող գումարով բարձրացնել կենսաթոշակները: Իսկ քաղաքացիների ներդրած գումարները վերադարձնել:
9. Եապես իջեցնել գազի գործող սակագինը, քանի որ սահմանին 1000մ3 գազը ՀՀ-ն ստանում է 150 ԱՄՆ դոլարով, իսկ վերջնական սպառողին, այդ թվում՝ բնակչությանը, այն հասնում է առնվազն երկու անգամ բարձր գնով:
10. Կտրուկ իջեցնել էլեկտրաէներգիայի սակագինը, քանի որ մեր հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի շուրջ 60-65 %-ն արտադրում են հիդրոէլեկտրակայանները (ՀՀ-ում գործում է ավելի քան 200 հէկ) եւ ատոմային էլեկտրակայանը: Ընդ որում՝ հէկերի արտադրած 1 կվտ/ժ էլեկտրաէներգիայի միջին ինքնարժեքը կազմում է 2-5 ՀՀ դրամ, իսկ ԱԷԿ-ինը՝ 5-7 ՀՀ դրամ:
11. Մաքսային ոլորտում վերացնել, այսպես կոչված, «հսկիչ զնեռի» կիրառումը:
12. Գյուղացիական տնտեսությունների համար տարեկան 1 հա հողամասի ռոտզման դիմաց վճար սահմանել 1000 ՀՀ դրամ:
13. Առողջապահական ոլորտում արժատապես փոխել պետական պատվերի տրամադրման համակարգը՝ սոցիալապես անապահով խավերին, զինծառայողներին եւ օրենքով սահմանված այլ շահառուներին տրամադրել իրենց հասանելի սերտիֆիկատը: Պետական պատվերի համակարգը անբողջությամբ սերտիֆիկացնել:
14. Վերանայել հանքարդյունաբերության ոլորտում բնօգտագործման վճարների հաշվարկման եւ վճարման մեխանիզմը՝ հօգուտ պետական բյուջեի:
15. Բարձր առաջադիմությամբ ոչ մի ուսանող ուսման վարձը չվճարելու պատճառով չպետք է զրկվի կրթություն ստանալու իրավունքից:

Մեր ձայնը՝ Աղասի Նալբանդյանին



ԿԱՍՈ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ
Սիսիան քաղաքի բնակիչ

Աղասի Նալբանդյանին ճանաչում եմ տասը տարուց ավելի, ավելի մոտիկից շփվել եմ նրա հետ, երբ աշխատում էի քաղաքապետարանի քաղաքաշինության եւ տնտեսության ոլորտը համակարգող բաժնում (գլխավոր մասնագետ էի): Թե առօրյա կյանքում, թե աշխատանքում հույժ դրական կարելի է գնահատել նրա գործունեությունը: Ջանք ու եռանդ չի խնայել սիսիանցու պատիվը բարձր պահելու համար, ժողովրդի կողքին է եղել ամեն մի հարցում: Ամենակարեւորը՝ բարյացակամ է ու քեն ու դիս չունի մեջը, - դա կարող են հաստատել նրա հետ շփվողները:

Աղասի Նալբանդյանը միշտ գործադիր ոլորտում է եղել, ղեկավար պաշտոններ վարել, եւ ահա տեղեկացանք, որ պատգամավորի թեկնածու է առաջադրվել Վայոց ձորը եւ Սյունիքն ընդգրկող N12 ընտրատարածքում՝ «Ծառուկյան» դաշինքի կողմից: Նախ՝ ընթերցողին կառաջարկել ծանոթանալ «Ծառուկյան» դաշինքի 15 առաջնահերթ քայլերին, որոնք միտված են հասարակության առողջացմանը, պետության հզորացմանը: Սա նշում եմ այն առումով, որ համայնքներում բազմաթիվ հիմնախնդիրներ են

կուտակվել: Սիսիանում, օրինակ, ինչպես բոլոր բնակավայրերում, արտագաղթը եւս իր շոշափուկներն է տարածել: Քաղաքապետարանում աշխատածու ժամանակ շփվումս բնակչության հետ սերտ է եղել, կարելի է ասել՝ քաղաքի բնակչության 90 տոկոսին գիտեն: Ինձ համար ավելի տեսանելի է, թե որքան մարդ է հեռացել Սիսիանից: Ինձ մտավոր հաշվարկներով՝ Սիսիանի բնակչության 30 տոկոսը դրսում է: Մեր բազմաբնակարան շենքի 40 տոկոսը դրսում է. մեր մուտքում մշտապես չորս ընտանիք է ապրում, մյուս բնակարաններում հանրապետության տարբեր վայրերից եւ Սիսիանի գյուղերից՝ պայմանագրային զինծառայողներ: Սա շատ տխուր վիճակագրություն է:

Եվ ահա այս համապատկերի վրա հանդես է գալիս «Ծառուկյան» դաշինքը՝ իր հավակնոտ 15 առաջնահերթ քայլերով եւ լուրջ փոփոխություններ պարունակող նախընտրական ծրագրով: «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանը նախընտրական ծրագրում փաստում է, որ եկել է իր խաչը կրելու եւ այն տանելու է մինչեւ վերջ:

Սիսիանցիներին կոչ կանեի ծանոթանալ բոլոր ուժերի նախընտրական ծրագրերին, բայց համոզված եմ, որ նրանց զգալի մասը նախապատվությունը կտա «Ծառուկյան» դաշինքին եւ Աղասի Նալբանդյանին:

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Սիսիան քաղաքի բնակիչ

Նախ՝ ուզում եմ նշել, որ ծանոթ եմ «Ծառուկյան» դաշինքի 15 առաջնահերթ քայլերին եւ նախընտրական ծրագրի հիմնադրույթներին: Ոգեւորիչ է, որ դաշինքն առաջարկում է հզոր Հայաստան կառուցելու իրատեսական ծրագիր: Հետաքրքիր է կարդալ, թե ինչպես է դաշինքը



պատրաստվում Հայաստանի Հանրապետությունը դուրս բերել տնտեսական եւ սոցիալական խոր ճգնաժամից՝ ոլորտ առ ոլորտ: 15 առաջնահերթ քայլերից առաջինը բոլորի շահերից է բխում. միջին կենսաթոշակի չափը համապատասխանեցնել նվազագույն կենսապահովման զամբյուղին, այն բարձրացնել 25 հազար դրամով եւ պարբերաբար ինդեքսավորել:

Նախատեսվում է, «Ծառուկյան» դաշինքի ղեկավար, նվազագույն աշխատավարձը սահմանել 80 հազար դրամ, եապես իջեցնել գազի գործող սակագինը, գյուղատնտեսական վարկերի տոկոսը չպետք է գերազանցի 3-5 տոկոսի շենը: Այս ամենը հույս է ներշնչում, որ մեր կյանքը փոքրիշատե բարեկեցիկ կդառնա: Մի այլ փաստ է մեզ ոգեւորել, այն, որ Վայոց ձորը եւ Սյունիքն ընդգրկող թիվ 12 ընտրատարածքում «Ծառուկյան» դաշինքով պատգամավորի թեկնածու է առաջադրվել Աղասի Նալբանդյանը:

Պատգամավորի թեկնածուին գիտեն քաղաքապետի պաշտոնում աշխատելու տարիներից: Բարի, մարդկային, աջակցող, օգնող, գործարարի անուրանալի հատկանիշներով օժտված, - որպես անհատ այդպես է տպավորվել իմ մտապատկերում:

Ստանում եմ, որ վերջապես փոփոխու-

թյուններ կլինեն, Աղասի Նալբանդյանն ընտրողին չի հիշի շատ-շատերի նման՝ ընտրությունից ընտրություն, հոգսաշատ Սիսիանի հարցերը կբարձրացնի երկրի օրենսդիր մարմնում: Հետամուտ կլինի, որ դրանք դրական լուծում ստանան:

Համոզված եմ՝ գործարար ու ձեռներեց, տեղական ինքնակառավարման մարմիններում եւ սպասարկման ոլորտում մեծ փորձ ունեցող Աղասի Նալբանդյանը կհաջողի եւ օրենսդրական աշխատանքում:

Այս ամենը հաշվի առնելով՝ կոչ եմ անում սիսիանցիներին առաջիկա խորհրդարանական ընտրություններում իրենց ձայնը տալ «Ծառուկյան» դաշինքի եւ Աղասի Նալբանդյանի օգտին:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ԲԲԿ Սիսիանի կառույցի ղեկավար

Հարցնում եք՝ ինչպե՞ս կբնութագրեք պատգամավորի թեկնածու Աղասի Նալբանդյանին: Ծանաչում եմ սովորել, սերտորեն շփվել բուհում ուսանելիս, մեր ուսանողական տարիները ոչ միայն համընկել են, այլեւ բուհն ավարտելուց հետո Քուրթալիում միասին երեք ամիս ռազ-

Աղասի Նրա ցավն էլ ամենահասարակ Չակոբջանյան ու պարզ գույնն ունի, ինչ ամենքինս է




ՍՈՒՄԱՆԱ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

Աղասի Չակոբջանյան. Սյունիքի ու Վայոց ձորի մարզերն ընդգրկող թիվ 12 ընտրատարածքում Աժ պատգամավորի թեկնածու՝ առաջադրված «Ծառուկյան» դաշինքի կողմից:

Խոսում է պարզ ու հասկանալի՝ չքանակված զարմացնել զրուցակցին, առանց իր կուսակցության՝ երկիր բարեփոխող հնչեղ պատգամների եւ ժողովրդի ապագան հստակեցնող միակի, անփոխարինելի հավակնության: Նրան հանդիպեցինք իր նախածեռնությամբ եւ «Գազիկ Ծառուկյան» հիմնադրամի միջոցներով կառուցված, արդեն ավարտին հասցված եւ շահագործման պատրաստ, անհրաժեշտ մասնաբաժիններով սպորտապարտիզի հսկա շենքի բակում, որը հիմնականում մասնագիտացված է ազատ ոճի ըմբշամարտի, բռնցքամարտի, ինչպես նաեւ՝ արեւելյան մարզաձեւերի ուղղությամբ: Ինչպես ինքն է խոստովա-

նում՝ այն շատ թանկ հաճույք է եւ պատիվ կրերն ցանկացած քաղաքի՝ ծախսված գումարով ու նպատակով, մշակութային, ռազմավարական առաքելությամբ: Ի դեպ, կառույցի արտաքին եւ ներքին հարդարման աշխատանքներում սեփական ներդրումն են ունեցել նաեւ Աղասի Չակոբջանյանն ու նրա ընկերները: Առաջիկայում կբարեկարգվի նաեւ շրջակա տարածքը, այն վեր կածվի գեղեցիկ ծաղկապուրակի՝ բացօթյա սրճարանով, հանգստի կանաչ գոտիներով: Շրջակայքը կդառնա իսկական սպորտային գոտի, մասնավորապես որ կառույցի հարեւանությամբ է գտնվում նաեւ Աղասի Չակոբջանյան նախկին քաղաքապետի ջանքերով ՊՆ հաշվեկշիռի հանված եւ Սի-

սիանի համայնքին հանձնված ֆուտբոլի դաշտը, որի երկայնքով արդեն տնկվել են հարյուրավոր ծառեր: Ոչ ամենեւին պատգամավորության թեկնածու դառնալու պատվին, այլ՝ վաղուց սկսված աշխատանքն ուղղակի շարունակության մեջ է: Եվ որն է սպորտային համալիր ստեղծելու նրա նպատակը: Հարցն անտեղի էր, պատասխանն էլ՝ կամխատեսելի, պարզ ու տրամաբանական. որպեսզի փողոցներում անտեղի շրջող երեխաներ չլինեն, կոփվեն մեր երեխաները, ֆիզիկապես ամրապինդ զինվորներ տանք բանակին: Աղասի Չակոբջանյանն ամենակարեւորը չասաց՝ մոռացե՛լ էք, որ իմ քաղաքապետության օրոք՝ 2014 թվականին Սիսիան



Տիգրան Մանուկյանի հետ

մական ճամբարում ենք եղել: Աղասի Չակոբջանյանը 23 տարեկանից մինչեւ հիմա ղեկավար պաշտոններ է վարել՝ էներգետիկայի, «Հայփոստում», «Արմենթելում»: 2008-ից ղեկավարել է Սիսիանի քաղաքային համայնքը՝ երկու ընտրաշրջան: Վայելում է ժողովրդի հարգանքը՝ ճշտախոսությամբ, պարտաճանաչությամբ, տված խոստումը գետնով չի տալիս: Այսպես ձեւակերպեմ՝ նրա քրոս բարի գործերը շատ ավելի շատ են, քան խոստացած ու չարածները: Ծփվող է, ընկերասեր, լավ ու վատը, չորն ու թացն իրարից տարբերող, նրա հաղորդակցման, շփման դաշտը չափազանց ընդգրկուն է, մեծին մեծի պես է վերաբերվում, փոքրին՝ փոքրի, տգետին էլ հարգանքով է պատասխանում: Կուզեի, մասնավորապես, մշակ Աղասի Չակոբջանյանի ակտիվ դիրքորոշումն ապրիլյան պատերազմի օրերին, երբ Սիսիանի համայնքի ղեկավարն էր: Ոչ միայն ստեղծեց հանձնաժողով, դրամահավաք կազմակերպեց, այլևս անձամբ մեկնեց առաջնագիծ՝ բարոյապես աջակցելու կռվող տղաներին, լինելու նրանց կողքին: Ի դեպ, մենք խնամիներ ենք, եւ ինքն օրինակելի բարեկամ է: Նրա հարուստ կենսափորձը, մանավանդ գործադիրում աշխատանքը հաստատում, ամրապնդում է համոզմունքը, որ իրեն լավագույն կողմերով կարող է դրսևորել նաեւ երկրի օրենսդիր մարմնում՝ Ազգային ժողովում: Դույզն-ինչ չեն կասկածում, որ խորհրդարանում ակտիվորեն կմասնակցի օրենքների մշակմանը, հանդես կգա օրենսդրական նախածեռնություններով: Քանի որ պատեհ առիթ է ընձեռվել, կուզեի որոշ նկատառումներ հայտնել: Քաղաքականությամբ պիտի զբաղվեն մարդիկ, ովքեր ճկուն միտք ունեն, խելացի են, գոնե տիրապետում են քաղաքականության այբուբենին: Մինչդեռ

ամեն պատահական մարդ այսօր մտել է քաղաքական դաշտ, մինչեւ անգամ բարձրագույն կրթություն չունեցողը, աններելի է քաղաքականության մեջ ինքնագործունեությամբ զբաղվելը: Բացի այդ՝ նույն մարդկանց խորհրդարանում տեսնելով եւ լսելով՝ հոգնել ենք: Եկել է փոփոխությունների ժամանակը: Դրական փաստ կարող են համարել այն, որ Սիսիանում նախընտրական մթնոլորտը հանդարտ է: Հինգ կուսակցության եւ չորս դաշինքի նախընտրական քարոզարշավն ընթանում է առանց բախումների, անցանկալի երեւոյթների, փոխադարձ վիրավորանքների: Սա, անշուշտ, ողջունելի կարելի է, բայց, ինչպես ասում են, սատանայի ականջը խուլ: 2007-ից ընդունվել են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության շարքերը, երեք տարի է՝ կուսակցության Սիսիանի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահն են: Դեռեւս չիրապարակված՝ տեղյակ են եղել «Ծառուկյան» դաշինքի 15 առաջնահերթ քայլերին, նախընտրական ծրագրի հիմնադրույթներին, որպես կուսակցության տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ՝ որոշակի մասնակցություն են ունեցել դրանց մշակումներին: Ողջունելի է այն, որ Գազիկ Ծառուկյանը հայտարարում է, որ հանրային լայն աջակցություն ունենալու, այն է՝ 50 տոկոս +1 ձայն ստանալու դեպքում պարտավորվում է առաջին իսկ ամսից կյանքի կոչել դաշինքի 15 առաջնահերթ քայլերը, որոնք, անշուշտ, միտված են ժողովրդական լայն զանգվածների կենսամակարդակի բարձրացմանը: Ուշագրավ է նաեւ «Ծառուկյան» դաշինքի նպատակը՝ ձեւակերպված նախընտրական ծրագրում՝ ունենալ հզոր պետություն, զարգացող տնտեսություն, բարեկեցիկ ընտանիք, արժանապատիվ քաղաքացի:

Ես միանշանակ հավատում եմ եւ հավանություն եմ տալիս դաշինքի որդեգրած քաղաքականությանը եւ կոչ անում քվեարկել «Ծառուկյան» դաշինքի ու Աղասի Չակոբջանյանի օգտին:



ՏԱՅԵՎԻԿ ՇՈՂՈՒՆՑ Սիսիան քաղաքի բնակիչ

Մարդիկ հոգնել են այս վիճակից, բայց սպասելիքներ ունեն խորհրդարանական առաջիկա ընտրություններից: Մանավանդ հույսեր են կապում «Ծառուկյան» դաշինքի հետ: Ինձ համար գրավիչն այն է, որ դաշինքի 15 առաջնահերթ քայլերի շրջանակում տեղ է հատկացված ուսանողությանը, ավելի ստույգ՝ նախատեսված է, որ բարձր առաջադիմությամբ ոչ մի ուսանող ուսման վարձը չվճարելու պատճառով չպետք է զրկվի կրթություն ստանալու իրավունքից: Դաշինքի կողմից պատգամավորի թեկնածու առաջադրված Աղասի Չակոբջանյանին ծանոթ եմ առավելապես այն տարիներից, երբ նա պաշտոնավարում էր որպես Սիսիանի քաղաքապետ: Միշտ աջակցել է իր համաքաղաքացիներին, փորձել լուծել նրանց խնդիրները: Նրա պաշտոնավարման օրոք էր, որ Սիսիանը հռչակվեց հանրապետու-

թյան երիտասարդական մայրաքաղաք, երիտասարդության կյանքը որոշ աշխուժություն ապրեց: Բացի այդ, յուրաքանչյուր տարի, սկսած 2007 թվականից, օգոստոսին քաղաքը դառնում էր հանդիպավոր տարբեր բնակավայրերում, նաեւ արտերկրում ապրող սիսիանցիների համար: Ըստ իս՝ երիտասարդության ուսման եւ ժամանցի հարցերը ճիշտ կազմակերպելու դեպքում արտագաղթի ծավալները կկրճատվեն: Աշխուժությունը կրկին «կվեռադառնա» մեր քաղաք: Մեր բազմաբնակարան շենքի բնակչության տասը տոկոսը Ռուսաստանում է: Իսկ քանի՞ մասն չենք կա Սիսիանում: Աղասի Չակոբջանյանը մտահոգված է Սիսիանի մարզական կյանքի վերելքով: «Գազիկ Ծառուկյան» հիմնադրամի միջոցներով եւ նրա ջանքերով շարք է մտել նորակառույց մարզադահլիճը, որի շնորհիվ շատ ու շատ ղեռահասներ կկտրվեն փողոցի բացասական ազդեցությունից: Բացի այդ նպատակավոր պայմաններ կստեղծվեն տարբեր մարզաձեւերի մասայականացման համար: Այս գործին նախանձախնդիր է եղել նաեւ այն ժամանակ, երբ այլեւս քաղաքապետ չէր: Ինչեւէ, ես հավատում եմ ընտրություններով փոփոխություններին թե՛ քաղաքական, թե՛ հասնապագայի կյանքում: Մարդիկ պիտի այս անգամ սթափ դառնան, անտեսելով սուտ խոստումները, նախընտրական հարայ-հրոցները, չերկյուղեն ոչնչից: Բոլորովս պիտի պայքարենք ընտրակեղծիքների, բոլոր արատավոր երեւոյթների դեմ: Յուրաքանչյուր խղճի մտքը եւ պատասխանատվության զգացումով պիտի մոտենանք քվեատուփին: Իսկապես որ՝ եկել է փոփոխությունների եւ կառուցելու ժամանակը, ինչպես ազդարարում է «Ծառուկյան» դաշինքը: ■

Դիմանկարի ուղղագիծ

Մեր ձայնը՝ Աղասի Չակոբջանյանի



6

Կարգադրույց օրինակ թեմայով

ԱՂԱՍԻ ՀԱԿՈՒԲՋԱՆՅԱՆ.

«Միայն ուժեղ համայնքով կարելի է պերուրությունը հզորացնել»

1 հանցեց, իսկ 2017-ին վերադարձավ: Եվ ի՞նչ երաշխիք կա, որ նա վերստին չի նահանջի, եթե, ասենք, 2015-ի սման մի նոր իրավիճակ ստեղծվի երկրի ներքաղաքական կյանքում:

– Եթե լսել եք, Գագիկ Ծառուկյանն իր ելույթներում, հայտարարություններում միշտ նշում է, որ պարտք ունի ժողովրդի հանդեպ եւ նրա համար բարեկեցիկ ապագա ստեղծելու խաչն է կրում: Վստահ եմ՝ իրատեսական են նրա բոլոր ծրագրերը, նա խոսքի եւ գործի մարդ է ու երբեմն իր ժողովրդին չի հասցնի մի կետի եւ հետ կանգնի: Աստվածապաշտ, եկեղեցի կառուցող մարդը չի կարող նման կերպ վարվել: Գնալու ենք մինչեւ վերջ՝ հաղթանակի, բարեփոխությունների ու կառուցելու վճռականությամբ:

– Երկու անգամ՝ 2008-ին եւ 2012-ին, սիսիանցի ընտրողը շատ լուրջ մրցակցության պայմաններում Ձեզ ընտրեց Սիսիան համայնքի ղեկավար: 2016-ի հոկտեմբերի 2-ի ՏԻՄ ընտրություններին Դուք դարձյալ մեծ թվով քվեներ ստացաք, բայց դա, ըստ էության, բավական չէր, որ ընտրված համարվեիք...

Ի՞նչն էր ուշագրավ. Դուք շնորհավորեցիք Ձեր մրցակցին... Դա, գոնե մեր մարզի իրականության մեջ, քաղաքական մշակույթի նոր դրսևորում էր՝ մրցակցող կողմերին համերաշխության մղող դրսևորում: Եվ այնուհանդերձ, Դուք չե՞ք նեղացել ընտրողներից:

Արդյո՞ք հոկտեմբերի 2-ից հետո Դուք եւ Ձեր կայուն, հաստատուն ընտրողը մնացիք համերաշխ, բարեկամ, միմյանց նեղուկ...

– Աղաթի Հակոբջանյանը ոչ մեկից նեղանալու բարոյական իրավունք չունի: Գոհ եմ սիսիանցի ընտրողից, համայնքի յուրաքանչյուր անդամից: Ասեմ՝ ինչու: Ինձ վստահության քվե տվողների այն նշանոցը, որ նախընտրական շրջանում դրել էինք, ունեցանք: Նախորդ տարիների փորձը հաշվի առնելով՝ ենթադրվում էր, որ Սիսիանում ընտրությանը կմասնակցի մոտ 6500 հոգի, որից 3000-ից ավելի ձայն էինք սկսելու ստանալ մեր օգտին (այդպես էլ եղավ. մոտ 3200 հոգի քվեարկեց իմ օգտին):

«Սակայն աննախադեպ իրավիճակ ստեղծվեց. հոկտեմբերի 2-ի ընտրությանը մասնակցեց արտերկրում բնակվող կամ ժամկետային զինծառայության մեջ գտնվող, բայց այստեղ ընտրելու իրավունք ունեցող մոտ 1000 ընտրող, ընդ որում՝ ժամկետային զինծառայողներ, ովքեր այդ օրը ստացել էին արձակուրդ, իսկ մի մասը նույնիսկ նոր-նոր գորակոչված էր:»

Սա մեզ համար անակնկալ էր, եւ արդյունքում հաղթող ճանաչվեց մյուս թեկնածուն:

Ինչ վերաբերում է նեղանալուն կամ ինչ-որ մեկի հանդեպ վատ վերաբերմունք ցուցաբերելուն, դա Աղաթի Հակոբջանյանի գործելաոճը չէ: Նույն կերպ շարունակում են ապրել Սիսիանում, գլուխս բարձր քայլել փողոցներում, հնարավորության սահմաններում ջնջակցել մարդկանց: Հաշվի առնելով ժողովրդի հանդեպ ունեցած իմ վերաբերմունքը, նախորդ տարիների աշխատանքս հիմք ընդունելով եմ

ընդգրկվել ընտրապայքարում:

– 2016-ի սեպտեմբերի 18-ի եւ հոկտեմբերի 2-ի ՏԻՄ ընտրություններից առաջ եւ հետո որոշ փորձագետներ, քաղաքական մեկնաբաններ այն տեսակետն էին արտահայտում, թե իբր ՏԻՄ ընտրությունն ինչ-որ առումով նախավարժանք է սպասվող Աժ ընտրությունների համար, ուժերի ստուգատես:

Ի՞նչ եք կարծում, կարելի՞ է այդ ընտրությունների արդյունքներով ուրվագծել քաղաքական ուժերի, լիդերների հնարավորությունների հարաբերակցությունը ներկա ընտրապայքարում, թե՞ հիմա միանգամայն այլ տրամաբանություն եւ ուժերի այլ հարաբերակցություն գոյություն ունի:

– Նման վերլուծությունը միանշանակ չեն ընդունում, որովհետեւ առաջիկա ընտրությունների նախադեպը մենք չենք ունեցել: Այսօր Սիսիանի տարածաշրջանի ընտրազանգվածը մի քանի շերտի է բաժանված՝ բարեկամական, ընկերական, գործընկերային, կուսակցական եւ այլն: Ի վերջո 9 քաղաքական ուժի պայմաններում հեշտ չէ որեւէ հստակ կանխատեսում անել. ամեն քայլափոխի ենթաշտաբներ, գովազդային պաստառներ են. նման իրավիճակ դեռ չենք ունեցել: Բայց կան թեկնածուներ, ովքեր նախորդ ընտրությունների ընթացքում կայուն ընտրազանգված են ձեւավորել, ինչը նպաստող համագամայն է: Կոնկրետ ես հենվում եմ այն ընտրազանգվածի վրա, որ հոկտեմբերի 2-ին ինձ վստահության քվե է տվել, ինչպես նաեւ նրանց վրա, ովքեր նախկինում սխալվել կամ փոշմանել են: Այնպես որ ասել, թե նախորդ ընտրությունների սցենարը պետք է կրկնվի կամ այն ուժը, որ հաղթեց, այսօր էլ կհաղթի, դա բացառում են:

– Եվ ինչպե՞ս եք գնահատում «Ծառուկյան» դաշինքի ընտրական հնարավորությունները Սյունիքի մարզում (առանց Վայոց ձորի) եւ հատկապես Սիսիանի տարածաշրջանում:

Աժ նախորդ ընտրություններում Սիսիանի տարածաշրջանի 16 հազար ընտրողից մոտ 5 հազարը քվեարկեց ԲՀԿ-ի օգտին: Կկարողանա՞ք այդ «բնագիծը» պահպանել:

– Երբ նոր էի ընտրվել ղեկավարի պաշտոնում՝ մոտ 30-37 տարի առաջ, ինձ համար մութ անտառ էր, բայց, հիմք ընդունելով նախորդ ղեկավարի ցուցանիշները, սկսեցի դրանցով առաջ շարժվել: Հիմա, իհարկե, նախորդ ընտրության ցուցանիշը կփորձեմ գերազանցել, եթե ոչ՝ նախկինը պահպանել: Մեր համայնքի կյանքում բավականին լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, եթե կարողանանք նախկինի 80-90 տոկոսը պահպանել, լավ կլինի, ինչի հնարավորությունը տեսնում եմ՝ շրջելով բնակավայրերում, մարդկանց հետ հանդիպելով:

– Ինչո՞ւ սիսիանցի ընտրողը (չեն ասում թիվ 12 ընտրատարածքի կամ Սյունիքի մարզի) պետք է գնա Գագիկ Ծառուկյանի զխավորած դաշինքի հետեւից: Մարդիկ հարցնում են՝ ԲՀԿ-ն ուք տարի Սիսիանում քաղաքապետ է ունեցել, ի՞նչ արմատական խնդիր է լուծել, որքանո՞վ է աջակից եղել իր քաղաքապետին:

– Նախ նշեմ, որ իմ գործունեության տարիները համընկան նաեւ այն կարճ ժամանակամիջոցին, երբ ԲՀԿ-ն կոալիցիայի կազմում էր, որտեղից դուրս գալով՝ բնականաբար ես նույնպես հայտնվեցի ոչ իշխանական թեւում: Նման իրավիճակում իշխող հանրապետականների հետ աշխատելը բավականին բարդ աշխատանք էր: Համայնքի ղեկավարման տարիներին, վերկանգնելով անձնական, կուսակցական

շահերից, բազում աշխատանքներ իրականացրի՞մ՝ մշակույթի տան հիմնանորոգում, որոշ փողոցների ասֆալտապատում եւ բարեկարգում, լուսավորության անցկացում, տանիքների նորոգում, մարզադահլիճի կառուցում եւ այլն: Մշակութային բնագավառում նույնպես մշակակալի իրադարձություններ տեղի ունեցան՝ Համո Սահյանի ծննդյան 100-ամյակի, Նիկողայոս Ադոնցի 140-ամյակի առթիվ մեծ տոնակատարությունների անցկացում՝ հանրապետության մշակավոր գիտնականների, մշակութային եւ հասարակական գործիչների մասնակցությամբ:

«Մի խոսքով՝ ղեկավարման ուք տարվա ընթացքում փորձել եմ անել առավելագույնը, բնականաբար եղել եմ ծրագրեր, որոնք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով իրականություն չեն դարձել, իսկ կուսակցական պատկանելությանս համար որոշ աշխատանքներ իրականացնելիս բախվել եմ նաեւ խոչընդոտների:»

– Նախընտրական քարոզարշավի բուռն ընթացքն ամբողջ հանրապետությունում ցույց է տալիս, որ քաղաքական ուժերն այնուամենայնիվ իրենց նախընտրական ծրագրերով են ներկայանում հանրությանը: Այլ հարց է, թե ընտրողը որքանով հաշվի կառնի այդ ծրագիրը քվեարկության ժամանակ:

Կարո՞ղ եք շատ խամառու ներկայացնել «Ծառուկյան» դաշինքի նախընտրական ծրագիրը, որքանո՞վ է այն արտահայտում բնակչության մտահոգությունները, երկրի առջեւ ծառայած հիմնախնդիրները եւ դրանց լուծման իրական ուղիները:

Եվ, որ կարելու է, «Ծառուկյան» դաշինքի ծրագիրը սկզբունքային ի՞նչ տարբերություններ ունի ընտրությունների մասնակցող քաղաքական մյուս ուժերի ծրագրերից:

– Անկեղծ ասած, հեռուստատեսությամբ լսելով եմ մասամբ ծանոթացել մյուս քաղաքական ուժերի ծրագրերին, բայց քաջատեղյակ եմ «Ծառուկյան» դաշինքի ծրագրից: Ի՞նչ է պետք մեր սյունեցուն, սիսիանցուն. նախենառաջ աշխատանք՝ արժանապատիվ ապրելու համար: Այսօր բարեգործություններով, տարեկան մեկ անգամ ինչ-որ ծրագրերով թեթեւալի աշխատանք կատարելով՝ բարեկեցիկ կյանքի չենք հասնի: Արմատական տեղաշարժ պետք է կատարվի. պետք է ունենանք արժանապատիվ կենսաթոշակ, աշխատավարձ, որ ժողովուրդն իրեն ապահով գգա եւ իր մասնակցությունն ունենա պետականաշինության գործում:

Տեղյակ եմ, որ «Ծառուկյան» դաշինքի ներկայացրած ծրագիրը տարիների աշխատանք է՝ հիմնված մասնագետների լուրջ վերլուծությունների վրա: Եթե Ծառուկյանը խոստանում է, որ կենսաթոշակը կավելանա 25 հազար դրամով կամ նվազագույն աշխատավարձը կսահմանվի 80 հազար դրամ, ուրեմն դրա հիմքերը վարդուց են պատրաստ, արբյուրները՝ հայտնի, եւ այդպես շարունակ: Եթե խորհրդային տարիներին հայ մարդն ամենաբարեկեցիկ ապրողներից էր, ամենատեղծարարը, ապա այսօր ի՞նչ պատահեց նրան: Ի՞նչ է ատուն ժողովուրդը. ապահովեք մեզ աշխատանքով, եւ մենք կկանգնենք պետության կողքին:

– Ուշագրավ է «Ծառուկյան» դաշինքի 15 առաջնահերթ քայլերը մատնանշող փաստաթուղթը:

Գագիկ Ծառուկյանը եւ դաշինքի մյուս ներկայացուցիչները հայտնում են, որ ամենակարճ ժամանակամիջոցում դրանք կյանքի կոչվեն, իսկ դաշինքի ընդդիմախոսները դրանք սովորական ամբոխահաճություն են համարում եւ հարցնում՝ ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով եք այդ խոստումները կյանքի կոչելու:

– Լավ ճանաչելով Գագիկ Ծառուկյանին՝ հավատացնում եմ, որ նա խոսքեր չի շռայլում, այլ տասը չափում՝ մեկ կտրում է: Վստահ եմ՝ ամեն 15 կետի տակ կա համապատասխան փաստաթուղթ, հարցի լուծման արբյուրը: Եթե ինքը համոզված չլիներ դրանում, ապա ծրագիրը ոչ թե 15, այլ 3-4 կետից բաղկացած կլիներ: Ժամկետի առումով նույնպես համոզված եմ, որ ամեն ինչ հաշվարկված է. 50%+1 ձայն հավաքելու դեպքում «Ծառուկյան» դաշինքի ծրագրերն ամնիջապես իրականություն կդառնան: Եթե վստահ չլիներ այդ ծրագրերի հիմնավորված լինելու մեջ, ինչպե՞ս կարող եմ համոզել մարդկանց: Երկար տարիներ ղեկավար աշխատելով՝ գիտեմ, թե ֆինանսական աղբյուրները որտեղից կարելի է հայթայթել. հավաստիացնում եմ՝ մեր երկիրը հնարավոր է կարգի բերել շատ կարճ ժամանակամիջոցում:

– Իսկ ո՞ր ուժն է, ըստ Ձեզ, ԲՀԿ-ի զխավոր մրցակից Սյունիքի ու Վայոց ձորի մարզերն ընդգրկող թիվ 12 ընտրատարածքում՝ Գևորգի ունեցք ընտրությանը մասնակցող 9 քաղաքական ուժերին:

– Ոչ մեկին էլ իրավունք չունեմ թերագնահատել, կարծում եմ՝ բոլորս էլ մեկ նպատակ ունենք՝ մեր ներդրումն ունենալ Հայաստանի Հանրապետության զարգացման, ազգի վիճակի բարելավման ազնվագույն գործում:

– Նախընտրական քարոզարշավը եւ առհասարակ ապրիլի 2-ի ընտրությունների նախապատրաստությունն ընթանում է հակասական, երբեմն մերժելի դրսևորումներով: Դա՞ ամբողջ Հայաստանում: Սյունիքի տարածաշրջաններին յուրաքանչյուրն էլ իր առանձնահատկությունն ունի: Իսկ Սիսիանում ինչպե՞ս է ընթանում նախընտրական պայքարը, արդյո՞ք լարվածություն կա, արդյո՞ք ծնշումներ, ոչ օրինական մեթոդներ դարձյալ կիրառվում են, թե՞ խաղաղ է ընթանում:

– Թեկնածուների միջեւ փոխադարձ վիրավորանքներ առայժմ չեն հնչում, բայց իշխող կուսակցությունների հույսը, ինչպես տեսնում եմ, նախենառաջ վարչական ռեսուրսն է: Առաջին անգամ չէ, որ մասնակցում են ընտրության, եւ ինձ միշտ բարձր են պահել, հաճախ հանդես եկել հաշտեցնողի կարգավիճակում: Իմ թիմակիցները, բնակչության տեղյակ լինելով, գիտեն, որ թույլ չեն տա այլ քայլերի դիմել. մեկը մյուսին վիրավորելով կամ փնտրելով՝ չեն կարող հաջողության հասնել:

– Հանրության մեջ կարծիք կա, որ կաշառք են բաժանում նաեւ «Ծառուկյան» դաշինքի անդամները:

– Ասում են՝ տունը հարսանիք է, փեսան տեղյակ չէ: Մենք նման պայմանավորվածություն չունենք կամ նման խոստումներ չենք տալու ժողովրդին: Նույնիսկ հակառակն ենք ասում մարդկանց. սիրելի՛ քաղաքացի, եթե այսօր ձեր ձայնը վաճառեք, եւս 5 տարի պատգամավորի դեմքը չեք տեսնի, ինչպես նախկին տարիներին: Եթե, օրինակ, 50 հազար դրամ ընտրակաշառքով ձեր հոգսը թեթեւանում է, վերցրեք, բայց մեր դաշինքն ընտրելով՝ ձեր տուն ամեն ամիս միայն կենսաթոշակից 50 հազարով ավելի գումար կմտնի: Հիմա ո՞րն է նախընտրելի. մե՞կ անգամ ստանալ այդ գումարը, թե՞ ամեն ամիս:

– Շատ տարօրինակ, նույնիսկ զավեշտի հասնող իրավիճակների ենք բախվում այս օրերին՝ պայմանավորված «ռեյտինգային» ցուցակով: Օրինակ, պատգամավորի որոշ թեկնածուներ հայտարարում են՝ ինձ ձայն տվեք, բայց ես չեմ ուզում պատգամավոր դառնալ: Կամ՝ ինձ առաջադրել եմ, որ ես ձայն բերեմ, բայց պատգամավոր դառնալու միտք չունեմ: Եվ նման շատ անհեթեթություններ...

Դուք իսկապե՞ս պատգամա-

Վոր դառնալու անկեղծ նպատակ ունեք: Եթե այո՛, ապա ինչո՛ւ: Ինչո՞ւ եք ուզում խորհրդարան մտնել:

– Իմ բնավորության համաձայն՝ երբեք ուրիշի դրոշակն իմ ձեռքը չեմ վերցնում: Ոչ մեկիս համար էլ գաղտնիք չէ, որ տարածքային ցուցակի յուրաքանչյուր թեկնածու ձայն է ապահովելու նախեսառաջ իր կուսակցության կամ դաշինքի համար: Եթե կարողանամ առավելագույն ձայներ ապահովել դաշինքի համար, բնականաբար իմ տեղը կունենամ ԱԺ-ում կամ գործադիր մարմնում՝ որպես վստահության արժանացած թեկնածու: Աղասի Հակոբջանյանը մտադիր չէ այլ նկատառումներով իր անունը դնել շահարկման մեջ: Ես դեռ անելիք ունեմ իմ շրջանի, հայրենիքի համար եւ այն, ինչ մինչ այժմ կատարել եմ, բավարար չէ, երբեք չեմ ցանկացել խաղից դուրս վիճակում հայտնվել եւ իմ թիմը լուսանցքից դուրս թողնել:

– **Թիվ 12 ընտրատարածքի ընտրողը, ավելի ստույգ՝ Սիսիանի տարածաշրջանի ընտրողը կոնկրետ ի՞նչ ակնկալիք կարող է ունենալ Աղասի Հակոբջանյան պատգամավորից, եթե, իհարկե, ապրիլի 2-ին ընտրվեք:**

– Աղասի Հակոբջանյանը կլինի համայնքապետ, պատգամավոր կամ այլ պաշտոնում, յուրաքանչյուր սիսիանցու համար միշտ հասանելի է եղել եւ կլինի: Մարդիկ ինձ դիմում են, օգնություն եւ աջակցություն ակնկալում, ինչի շնորհիվ կարող եմ ասել, որ ինչ-որ առումով նրանց համար հույսի շող եմ: Ես սկզբունքային մարդ եմ, եւ յուրաքանչյուր սիսիանցու արժանապատվությունն ինձ համար գերակա շահ է: Կարծում եմ՝ ժողովուրդը կգնահատի իմ՝ տարիների ընթացքում կատարած հսկայածավալ աշխատանքը, որը, վստահաբար կարող եմ ասել, գերազանցում է նախորդ երկու քաղաքապետի կատարածը՝ միասին վերցրած:

– **Խորհրդարանի աշխատանքը, բնականաբար, իր առանձնահատկությունները, իր դրսևորումներն ունի՞ մշտական հանձնաժողովներ, գործադիր իշխանության գործունեության վերահսկողություն, խմբակցության գործունեություն, պատգամավորի հարցապնդումներ, գրավոր եւ բանավոր հարցեր, հայտարարություններ...**

Այդ ամենը, իհարկե, այնքան էլ տեսանելի չէ շարքային ընտրողին, բայց, ի վերջո, դրանցով է չափվում պատգամավորի աշխատանքը: Մինչդեռ, որքանով հիշում ենք, տարիների ընթացքում չունեցանք գեթ մեկ օրինակ, որ սյունեցի պատգամավորն ԱԺ հարթակից հնչեցնի Սյունիքին առնչվող բազում հիմնախնդիրներից մեկը:

Եվ որքան վիրավորական է, որ Հայաստանի ամենախնամելի քաղաքային պատգամավորներին կայցնում են վիրավորական հորջորջումներ՝ տապալանաբար, մահարձան, արծան...

Կա՞ր երաշխիք, որ նույնը չի կրկնվի:

– Ժողովրդի ընտրյալը դառնալով՝ դու ներկայացնում ես ամբողջ ժողովրդին եւ պարտավոր ես քո պահվածքով, նիստուկացով, ելույթներով, բառապաշարով ներկայացնել նախեսառաջ քո շրջանը եւ այնտեղ բնակվող մարդու հոգը: Ընտրվելու դեպքում պարզապես իրավունք չունեմ իսկական պատգամավորին ոչ վայել պահվածք դրսևորել կամ լուռ նստել: Միգուցե խոսափողը հաճախ չվերցնեն խոսք, բայց տարբեր միջոցներով կկարողանամ մարդկանց հուզող բազում հարցեր լուծել: Շատ հաճախ էլ մարդկանց մի խումբը գրագետ, կիրք խոսքեր է շռայլում, բայց արդյունքում ոչ մի հարց չի լուծվում: Ես գործի մարդ եմ, եւ եթե ձեր նշած հորջորջումները կայցնեն նաեւ իմ անվանը, ես պարզապես իրավունք չեմ ունենա այս քաղաքում ապրել:

– **Ու՞ր տարի գլխավորելով Սիսիան համայնքը՝ Գուրգենի հանրության կողմից գրեթե չեք քննադատվել, հայիդյանքի չեք արժանացել: Միակ նկատելի դժգոհությունը, որ նաեւ Սիսիանի տարածաշրջանից դուրս էր թեւածում, Շաքեի ջրվեժի հետ կապված պատմությունն էր, որը, բարեբախտաբար, Ձեր նախաձեռնությամբ հարթվեց:**

Եվ, այդ բոլորով հանդերձ, ի՞նչ խոսքի տեղեր, ի՞նչ թերություններ, թույլ տեղեր ունեք, որ ընտրողի հետ միմյանց աչքերի մեջ ուղիղ նայելուն կարող եմ եւ



խոչընդոտ լինել:

– Բոլոր մարդիկ էլ աքիլլեսյան գարշապար, այսինքն՝ խոցելի տեղեր ունեն: Հարցն այն է, որ ինչքան էլ անուժ ես, միեւնույնն է, միշտ քննադատում եւ ավելին են պահանջում: Թող ամպագոռոռ չհնչի, բայց իմ ժողովուրդը սիրում ու հարգում է ինձ, եւ դա փոխադարձ է: Բայց կամ մարդիկ, ովքեր չեն ցանկանում կամ ի գորու չեն լավը, դրականը տեսնել ու գնահատել:

– **Եվ ի՞նչ թիմով է ԲՀԿ-ն թիվ 12 ընտրատարածքում մրցապայքարի ելել:**

Հանրության մեջ կարծիք կա, որ բավականին մրցունակ թիմ եք թիվ 12-ում ձակատ դուրս բերել:

– Անշուշտ ոգեւորիչ խոսակցություններ են պատվում՝ կապված մեր թիմի մրցունակության եւ վճռակամության հետ: Գրեթե բոլոր թեկնածուներին էլ անձնապես ճանաչում եմ, նրանցից յուրաքանչյուրը ճանապարհ անցած, իրենց շրջանում հարգանք եւ պատիվ ունեցող մարդիկ են, ինչը, համոզված եմ, մեր ընդհանուր գործի հաջողության երաշխիքներից է: Մտքում եմ, որ բոլորս մեր հնարավոր ձայներն ապահովենք՝ տրված խոստումներն ու ծրագրերն իրականություն դարձնելու համար:

– **Հանրության մեջ, անկեղծ լինե՞ք, Գագիկ Չառուկյանին հավատարմորեն մեծ բանակ կա: Հատկապես Սիսիանի տարածաշրջանում հավատ կա նաեւ Ձեր անձի հանդեպ, բայց... Ամեն ինչ դրանով չի ավարտվում:**

Դաշինքի կամ ԲՀԿ-ի դրոշի ներքո այսօր հանդես են գալիս նաեւ նրանք, ովքեր տարիներ շարունակ պայքարել են այդ ուժի դեմ, ովքեր պետական պաշտոնը կորցնելուց հետո ԲՀԿ-ի կործանմանը փոխել են ԲՀԿ-ի կործանմանը:

Եվ այդքանից հետո ասում եք՝ հավատացե՞ք մեզ: Իհարկե, ուրիշ կուսակցությունների պարագայում էլ այդ ցավը կա, բայց, միևնույն է, երեւոյթի անբարոյականությունը դրանով չի մեղմվում:

– Ձեր հարցի ենթատեքստում թաքնված ասելիքը հասկանում եմ, բայց այն կարծիքն է, որ երբեմն իրավիճակի փոփոխությունից, գաղափարական տարակարծություններից ելնելով՝ մարդիկ կարող են փոխել նաեւ կուսակցական պատկանելությունը: Ժամանակի ընթացքում հնարավոր է՝ հասկանաս, որ տվյալ կուսակցության պայմանները, գործելակերպը չեն համապատասխանում քո գաղափարներին եւ ընտրես այլ տարբերակ, որի դեպքում առավել նպաստավոր իրավիճակ կստեղծվի թե՛ քո ինքնադրսևորման, թե՛ քո երեխայի եւ առհասարակ երկրի ապագայի համար: Այնպես որ՝ նորմալ եմ համարում նման երեւույթը: Եթե մարդիկ հավատում են մեր դաշինքին, թող գան, եւ միասին կեր-

տենք մեր հաղթանակը:

– **Այն ծրագիրը, որ ներկայացրել է «Ծառուկյան» դաշինքը, անշուշտ, վերաբերում է նաեւ մեր տարածաշրջանին:**

Բայց մեր տարածաշրջանում կա մի հիմնախնդիր, որի մասին կուզենայինք Ձեր դիրքորոշումն իմանալ, որի վերաբերյալ, ցավոք, ոչ ոք իրատեսական խոսք չի ասում:

Մեր գյուղերն են մեռնում՝ լեռնային գյուղերը, դարերով ու հազարամյակներով ստեղծված գյուղերը: Իսկ մենք ուրախանում կամ բավարարվում ենք մի դպրոցի տանիք նորոգելով, երեխաներին մի քանի գնդակ նվիրելով, նահատակ զինվորների կենացը խմելով, տապանաքարի մոտ նկարվելով եւ հետո ի ցույց դնելով...

– Կյանքի պայմանները շատ արագ են փոխվում, եւ շատ դեպքերում դրանցից հետո մնացող գյուղում ապրելն արդեն իսկ հերոսություն է:

Մեր գյուղերից շատերն այսօր չունեն նորմալ դպրոց, մանկապարտեզ, բարեկարգ ճանապարհ, ոռոգման ու խմելու ջուր եւ այլն: Առհասարակ պետության զարգացման շեշտը պետք է դնել նախեսառաջ գյուղերի զարգացման վրա, իսկ մեր ծրագրում դրա համար կան համապատասխան հիմնադրույթներ.

այն է՝ տրամադրել ցածր տոկոսադրույթով կամ անտոկոս երկարաժամկետ գյուղատնտեսական վարկեր, գյուղացիական տնտեսությունների համար տարեկան 1 հա հողամասի ոռոգման ջրի դիմաց վճար սահմանել 1000 ՀՀ դրամ եւ այլն: Գաղտնիք չէ, որ այսօր շատ գյուղացիներ պայմանագրային զինծառայողներ են. բարձրացնելով նրանց աշխատավարձը, գյուղում ապրելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելով՝ նա հնարավորություն կունենա եւ կցանկանա ապրել գյուղում:

– **Ի՞նչ եք կարծում, համայնքների խոչորացումով գյուղերը կհանձնե՞ք հոգեվարքից, թե՛ կարագացնե՞ք նրանց վախճանը:**

Ի դեպ, որքանով տեղյակ ենք, Սիսիանի տարածաշրջանում էլ համայնքների խոչորացում է սպասվում...

– Գիտե՞ք՝ ինչ, համայնքների խոչորացումը պետք է ինքնաճանաչական չլինի: Իմ տեղեկություններով՝ Սիսիանում նույնպես

կշարունակվի այդ գործընթացը: Խոսելով ժողովրդի, նախկին ղեկավարների հետ՝ առաջին հերթին լսում ենք մարզպետարանների՝ որպես ոչ արդյունավետ աշխատանքով կառույցի գործունեության վերանայման մասին: Մեկ կառույցն էլ վիճակի չէ ամբողջովին պատկերացնել համայնքների խնդիրները, ղեկավարել դրանց աշխատանքները, իսկ հեռախոսային ինֆորմացիայով Սյունիք ղեկավարելը պետության կործանման սկիզբն է: Իմ կարծիքով՝ մարզպետարանները պետք է վերացվեն եւ փոխարենը ստեղծվեն տարածաշրջանային իշխանություններ, ինչը կնպաստի համայնքների զարգացմանը: Սիսիան ուժեղ համայնքով կարելի է պետությունը հզորացնել:

– **Սյունիքի մարզի զարգացման ռազմավարություն է մշակվել, Սյունիքի մարզում ներդրումների փաթեթ է մշակվել ու կառավարությունում քննարկվել, ի վերջո կառավարությունն է ներդրումային հավակնոտ խոստումներ տալիս:**

Արդյո՞ք տեղյակ եք այդ փաստաթղթերին, եւ ի՞նչ ծրագրեր կան այդ շարքում, որ ուղղակիորեն առնչվում են Սիսիանի տարածաշրջանին:

– Անկեղծ ասած, իրազեկված չեմ, բայց չեմ կարծում, որ Սիսիանն ամենամեծն է մնացել: Ողջունելի է, որ շեշտը դնում են հատկապես գյուղատնտեսության վրա, բայց ցանկալի է ուշադրություն դարձնել նաեւ արդյունաբերության որոշ ճյուղերի, զբոսաշրջության զարգացմանը: Առհասարակ ռազմավարական ծրագրերը պետք է իրատեսական ու հստակ լինեն, իսկ մինչ ընդունելը կամ հաստատելը դրանք պետք է հանրային քննարկման առարկա դարձնել:

– **Եվ, իհարկե, այս օրերի համար ավանդական հարց. ի՞նչ հորդոր կամ կոչ կուղղեք թիվ 12 ընտրատարածքի ընտրողին ապրիլի 2-ի քվեարկությունից առաջ:**

– Ապրենք համերաշխ, առանց իրար վարկաբեկելու՝ գործիք չդառնալով դրսի որոշ ուժերի համար: Բարձր պահելով մեր արժանապատվությունը՝ անցկացնենք ազնիվ, արդար ընտրություններ: Այս ընտրությունը մեզ համար նաեւ քննություն է՝ պարզելու, թե ով ինչքանով է վայելում ժողովրդի վստահությունը: Մեր իրական գնահատականը ստանանք ժողովրդից եւ պատրաստ լինենք այն ընդունել որպես ճշմարտություն: Ժողովուրդը սպասողական վիճակում է, փոփոխություններ է պահանջում, հոգնել է նույն անձանցից, միգուցե ինձնից էլ է հոգնել. կարծում եմ՝ այս ընտրությունը կտա այդ հարցի պատասխանը:

Հարցազրույցը՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Խարտայից օրվա թեմայով

Հիմնականում ուրվագիծ



Համահայկական ծաղկի փառատոն Սիսիանում (2015թ. հունիսի 5)

Աղասի նրա ցավն էլ ամենահասարակ ճակորջանյան... ու պարզ գույնն ունի, ինչ ամենքինս է

▶ 3 – Իսկ ո՞վ խոցելի տեղ չունի...
Նույնիսկ Հայկն ու Բելն ունեին խոցելի տեղեր...

Ձինաթափ անող պատասխան, դարձյալ չպարզեցի Աղասի ճակորջանյանի «աքիլլեյան գարշապարը»: Բայց ամեն ինչ կորած չէ, ուղղակի նրան հիշեցնել էր պետք հայրենի բնօրրանի դժվարին ճանապարհի մասին:

Աղասի ճակորջանյանի ցավը թաքցված էր 25 տարի անտեսված Սիսիանի խնդրում:

– Սիսիանի վիճակը ծանր է, եւ ինչո՞ւ պետք է ծանր չլիներ, կամ ինչո՞ւ պետք է սիսիանցին լավ վիճակում լիներ. 25 տարի է՝ ոչ մարգպետ ենք ունեցել, ով մի քիչ քաղցր աչքով կնայեր մեզ, ոչ էլ՝ նորմալ պատգամավոր, ով Սիսիանի համար ծրագրեր կբերեր... Ոչ էլ բյուջեն լցնող, աշխատատեղ ապահովող հանքարդյունաբերություն ունենք... Սիսիանցին մնացել է մենմենակ՝ ինքն իր հոգսի հետ:

Բոլոր խոստումներին գերզանցող փոթորիկ. Աղասի ճակորջանյանը ցանկության դեպքում ի գորու կլինի տակնուվրա անել Աժ մեռելային մակերեսությամբ՝ Սիսիանյան աշխարհի իր հնչել բարիտոնով, խորքերում թաքցված գայրույթի անսպառ պաշարով:

Այստեղ պարտադիր, թեկուզ կիսահեզնական ու դառնափորձ, հարց չտալն առնվազն միամտություն կլինեն:

– Բայց մի՞թե առանց նրանց աջակցության էլ Սիսիանը չի ապրել... Զէ՞ որ նրանք էլ կարող են ասել՝ հո չի՞ մեռել Սիսիանը... մենք թույլատրել ենք, որ նա ապրի...

Պատասխանն ավելի քան ցնցող էր, ի խորոց սրտի.

– Աստված է պահպանել Սիսիանը եւ նրա հպարտ, կառուցող, չեղածից շենացնող, ամեն դժվարության սովոր ու այն արժանապատվորեն հաղթահարող գավակները... Ահա թե ինչու չի մեռել Սի-

սիանը... Ի լուր անգործների ու չարակամների ասեմ՝ եւ չի էլ մեռնելու, այսուհետ էլ ավելի է ծաղկելու:

Ավելի լավ է չչեղվեմ քաղաքական հարթակից եւ Աղասի ճակորջանյանի անկեղծությունն առած՝ նրան հիշեցնեմ իր ակսոսանքների, կորած հույսերի, երբեմնի ուրախությունների, գալիք երկրաչեն ծրագրերի, ընդհանուր առմամբ՝ իր մասին... Արդեն հասկացել էի՝ իր մասին խոսելով, նա խոսում էր Սիսիանի մասին:

– Հարցնում եք. ինչո՞ւ գործարաններ

չենք կառուցել, այլ միայն սպորտի, մշակութային, հանգստի վայրեր...

Ասեմ. պատասխանս վերելում է... Եթե այսքանն էլ կարողացել ենք՝ ունեցած միակ լծակ-հիմնադրամի, ընկերական, իմ կուսակցական կապերի, մեր սեփական տրամաբան փնտրտուքների, կամ սիսիանցի լավ, հայրենասեր տղաների ուժերով, կարելի է փառք տալ Տիրոջը եւ առաջ քայլել:

Ցավոք, այն ամենը, ինչի մեջ հայտնվել ենք, նաեւ դուրս է բնության օրենքներից,



Սիսիան, Նորակառուց մարզադահլիճը



ուստի չեն գլանում Աղասի ճակորջանյանին անմիջապես ամպերից ցած իջեցնելու՝ բարձրացվելիք աշխատավարձերի, տրվելիք թոշակների, այլեւ բարձրաբերձ խոստումների եւ մեր ունեցած տնտեսական հնարավորությունների հակադարձ համեմատականով:

– Ի վերջո, իրատեսական լինենք. միայն կազմակերպող, սպորտային վայրեր, սրճարաններ կառուցելով չէ, որ մենք կարող ենք երջանկանալ կամ կշտանալ: Զէ՞ որ բոլոր նորմալ երկրներում նախ եւ առաջ աշխատում են, հաց են ուտում, ապա միայն՝ հաճախում մնալ վայրեր:

Նախ, նա մի քիչ անդրադարձ է կատարում իր ցավի միջով, որից հասկանում են, որ նրա ցավն էլ ամենահասարակ ու պարզ գույնն ունի, ինչ ամենքինս է:

– Գիտե՞ս, իմ նստելու վայրը դիմահայաց է երթուղայինների ու տաքսիների կանգառին: Երբեմն ուշադիր նայում եմ մարդկանց. նրանք ժամերով կանգնում, սպասում են երթուղայինին, իսկ տաքսիստներն ուղղակի պարապություններից մեզնում են: Ժողովուրդս փող չունի տաքսու համար, ժողովուրդս աղքատ է, նրա ինչի՞ն են պետք մեր սպորտային ու ժամանցային վայրերը:

Ինքս ինձ հարց եմ տալիս ու ինքս էլ պատասխանում. մարդիկ պետք է աշխատատեղ ունենան, աշխատեն, լավ վարձատրվեն, հետո միայն ուրախ տրամադրությամբ զվարճանքի վայրեր հաճախեն, մտածեն կոփվելու եւ մարզիկ դառնալու մասին:

Մտածենք, սոված մարդն ինչպե՞ս կարող է ծանրաձող բարձրացնել կամ բռնցքամարտի, ըմբշամարտի պարապմունքներ հանախել:

Էլի վերջնական ու միակեզրահանգումս սա է. զարգացած տնտեսություն, տնտեսությունը պետք է ուղղի կանգնի, հանդիսանա այն հենման կետը, որով հնարավոր կլինի սարեր շուռ տալ՝ ընդ որում՝ զարգացում ասելով ամբողջ երկիրն ու մարզը նկատի ունենք, որի պարագայում միայն վերափոխումներ կլինեն Սիսիանում:

Որքան էլ լուսավոր ու հավատավոր ծրագրերով, պարզվում է՝ Աղասի ճակորջանյանի ցավերի շարանը երկար է, որն աստիճանաբար ավելի է մեծանում. նա ցավ է զգում գումարի պատճառով ուսումը չչարունակող շնորհալի աշակերտի, դրա կողքին էլ՝ բուհերի արտադրած անորակ ու միատեսակ կադրերի, դպրոցներում չտրվող բավարար գիտելիքների, խոշորացված, այդպիսով՝ էլ ավելի մեռնող գյուղերի աղետալի վիճակի, համայնքների անթույլատրելի կախյալության ու խեղճության, բոլորովին ավելորդ կառույց-մարզավետարանների գոյության, Սյունիքի զարգացման ռազմավարության ծրագրի քամտ-խոցելիության համար...

– Երբ տեսնում եմ հարեւանիս երեխան սոված է, տանը բան չունեն ուտելու, իմ կերածն էլ հարամ է դառնում, կոկորդիս կանգնում... Բոլոր ստեղծող, ունեցողները չեն, որ ուրախ սրտով վայելում են իրենց ստեղծածը: Ինչի՞ մասին է խոսքը...

Աղասի ճակորջանյան թեկնածուին հիշեցնում եմ իր կյանքի ամենամեծ ուրախությունների մասին:

Նա վերապրում է իր նախածնունդային անցկացված մեծամուն բանասեր եւ պատմաբան Նիկողայոս Աղոնցի 140, մեծամուն հայրենակից Համո Սահյանի 100-ամյակների համաժողովրդական, շքեղ ու հանդիսավոր տոնակատարությունները, երիտասարդության եւ սպորտի մայրաքաղաք Սիսիանի փառավոր տարին, երբ ինքը մեծ ոգեւորությամբ սիսիանցի ուսանողների հետ քայլում էր քույր քաղաքների՝ Ֆրանսիայի Մոնտելիմարի, Գերմանիայի Ռավենսբրուքի, Հունաստանի Նիա Ջմիրնայի փողոցներով, իր քաղաքապետության տարիներին բարեկարգված, ասֆալտապատված

Փողոցները, բավականին շոշափելի ներդրումներով վերանորոգված եւ Համո Սահյանի անունով կոչված մշակույթի պալատը, սիսիանցի երեխաների օլիմպիադաների հաջողությունները, համրապետական մրցումներում ֆուտբոլի՝ իր իսկ ստեղծած պրոֆեսիոնալ դպրոցի սաների գրաված պատվավոր տեղերը, նաեւ այս մարզադահլիճի կառուցումը, որն իր համար նախ եւ առաջ ֆիզիկապես ուժեղ զինվորի պատրաստումն է բանակի համար...

Առանձնապես նա ուրախանում է հայոց բանակի հաջողություններով, ձեռքբերումներով, զինվածությամբ, նրա տոնական օրերով:

– Մոմեր էլ ենք վառում, եկեղեցի էլ ենք զննում, բայց միայն մոմեր վառելով չէ, բանակը մեր սրբությունն է, նրան ամեն ինչով է պետք սատարել, կողքին կանգնել՝ նյութապես, բարոյապես, անհրաժեշտության դեպքում էլ՝ ֆիզիկապես:

Աղասի Հակոբջանյանի հետագա մտքերը զրույցն ամփոփելու պես են հնչում.

– Ամեն մի օրն ինձ համար ուրախության եւ հպարտության աղբյուր է եղել, կարելի է ասել, զղջալու, ափսոսալու լուրջ պատճառներ չեն ունեցել, իսկ որոշակի սխալները... Բնական է, եղել են, մարդն իրավունք ունի նաեւ սխալվելու: Ի վերջո, մարդու հետ գործ ունեն... Բայց վատահ եմ ասում, դրանք վնաս չեն բերել ոչ բյուջեին, ոչ ժողովրդին եւ ոչ էլ ժողովրդի արժանապատվությանը:

Թերացումներ... այո, ունեցել եմ՝ ոչ միայն իմ մեղքով, այլեւ՝ պարտադրված եւ երկկողմանի... Լավ կլիներ, մյուս կողմն էլ իրեն հաշիվ տար ու մտածեր այդ բացթողման համար...

Ցավոք, միշտ մեղավոր կողմն է ազնվություն պահանջողը՝ մոռանալով, որ ազնվությունն ու բարի վերաբերմունքն էլ փոխադարձ հասկացություն են: Ազնիվ եղիր, ես էլ կլինեմ այդպիսին: Միա՛լ եմ...

Աղասի Հակոբջանյանն իր ուրախությունները հիշելիս չի մոռանում նրանց մեջ հիշատակել երեք դուստրերից հետո ծնված Մամիկոն որդու ծնունդը, ով իր հոր անունն առած՝ իր հոր պես հպարտ ու բացճակատ այսօր Մոսկվայի պատվավոր բուհում կայանում է որպես ուսումնաստեմ, հայրական տան ավանդներով դաստիարակված լավ հայ ու զավակ:

– Ժամանակը հերիքել է՝ դաստիարակությունը չորս զավակի միջեւ հավասարաչափ բաշխելու, – հարցնում են:

– Այսպես ասեմ, մայրը, մոր դերն ամեն ինչում է, բայց տղա զավակի դաստիարակությունը հիմնականում հոր գործն է: Նա տեսնում, ուշադիր զննում է քեզ եւ սովորում: Պարտադիր չէ նրան նստեցնել եւ դաս տալի: Ես նրա ձեռքից բռնում եւ գլուխ էի զննում, հայրական օջախ: Այստեղ նա տեսնում էր իմ վերաբերմունքը ծնողների հանդեպ, մանկան ջինջ երեւակայությամբ որսում իմ ամեն մի շարժումը, լսում յուրաքանչյուր բառ:

Հասարակ, անկարեւոր չթվա. ես բացում էի մայրիկիս սառնարանը, ստուգում նրա պարունակությունը՝ ի՞նչ ունի մայրս, ինչի՞ կարիք կա, որպեսզի հաջորդ այցիս լրացնեմ:

Որդիս տեսնում էր ծնողիս, ընդհանրապես՝ մեծի հանդեպ այդ ողջ հարգանքն ու սերը, պատասխանատվությունս:

Կամ նրա հետ գնում էի հորս, պապիս զերեզմանները, խնամում դրանք, ծաղիկներ դնում, խունկ վառում, մտում քարին եւ բարձրածայն զրուցում հորս հետ, պատմում իմ գործերից, ուժ ու խորհուրդ առնում նրանից:

Այս ամենն էլ որդիս տեսնում էր, եւ հետագայում հասկացա, որ նա շատ բան սովորել է հենց իմ այդ այցերի ժամանակ:

Մայրը, ծնողն ուրիշ հարթություններ են՝ մաքուր, քեզ մարդ պահող, անընդմեջ քեզ հիշեցնող կարեկցության, գթասրտության մասին:

Հայրս մի օր ասաց՝ տղաս, դու կարեւոր իր մարդուն, նրա հետ ազնիվ եղիր...

Կարելի է ասել, հայրական այս պատգամը ես էլ փոխանցել եմ որդուս եւ, փառք Աստծո, տեսնում եմ՝ ազնիվ, շիտակ, վատ սովորույթներից հեռու մարդ է մեծանում:

Ոչինչ չես կարող ասել, մասնագետ հոգեբանի, դաստիարակչի անթերի պատասխան էր, որից էլ միասին ու թեթեւ օր-



Սիսիան, Համո Սահյանի անվան մշակույթի տունը՝ հիմնանորոգված, կահավորված

ծաղում ենք. լավ է, երբ խոսքը հունորով եւ բարի է ավարտվում:

Ընդհանուր առմամբ, ինքն իրեն հաջողակ, երջանիկ մարդ է համարում՝ իր ամուր, ավանդական, բազմազավակ հայի պատվախնդիր գերդաստանով, թոռնիկներով, քաղաքի համար արած մեծ ու փոքր գործերով, սիսիանցիների կողմից վայելած հարգանքով:

Նա այսօր լուսավոր սերմեր է տեսնում նաեւ պետական կառավարման համակարգում՝ դրանք համարելով թույլ, բայց արդեն իսկ՝ հուսալի:

– Տեսնում եմ սառույցի հալչելը, նրա տեղաշարժը... Դա համազգային տեղաշարժ պետք է դառնա բոլորիս օգնությանը, ուս ուսի, ծանր խաչ տանելու պես: Եվ ոչ մի պաշտոնյա իրավունք չունի մաներելու, ամբարտավանանալու, անփոխարինելի, անսխալ թվալու, դրանցով զլուխ գովելու, զլուխ պահելու, կամ խաբելու, իր շահին ու պաշտոնին ի նպաստ՝ փողոցային կռիվներ տալու... Մենք դրա ժամանակը սպասել ենք, էլ չունենք:

– Եվ ո՞ւմ, կամ ինչի՞ դեմ ենք այսօր մենք պայքարում ձեզ հետ միասին... Կա՞ այն հուսալի ընտրագանգվածը, որը կկանգնի ստեղծված փակուղուց դուրս հանողի, առողջ ուժերի կողքին:

Հարցնում եւ մտահոգ նայում եմ

դրսում խաղացող մի քանի մանկահասակ երեխաների կողմը:

Պարտք ենք մնում այս փոքրիկներին, աններելի, չմարսվող պարտք... Իսկ ժամանակը, ցավոք, սպասելու, հետ պտտվելու, ներելու եւ շտկումներ անելու սովորույթ չունի: Ամեն ինչից անկախ՝ նա ստույգ է եւ՝ ոչ ամենեւին ի նպաստ մեզ:

Աղասի Հակոբջանյանն անշուշտ տեսնում է այդ առողջ ընտրագանգվածը, նրա հույսն ակտիվ հասարակությունն է, օրհասական ժամին՝ հայ ժողովրդի ողջախու-

թյունը, համախմբվելն ու սթափվելը: Նաեւ գիտե՛ ինչի համար եւ ում դեմ ենք պայքարում այս օրհասում:

– Այո, մենք ապրում եւ պայքարում ենք այս մանուկների համար, որպեսզի առանց պատերազմների՝ խաղաղ, բարեկեցիկ, տնտեսապես հզոր երկիր թողնենք իրենց, գալիք սերնդին:

Համաձայն եմ, թեկուզ պտուղները մենք չքաղենք, մենք չտեսնենք, բայց կերտենք:


Թող այս փոքրիկները տեսնեն... ■



Յոթ փարի շարունակ Սիսիանում ԼՂՎԵԿ երիտասարդության օրը



Դու մեր հոգու սիրո համն ես, / Մեր Սուրբ Սա՛յրն ես, Նայասան (Տիգրան Գրիգորյան)



Որոճաբերդ

ՀԱՍՈ ՍԱՀՅԱՆ Գարունդ հայերեն է գալիս

Գարունդ հայերեն է գալիս,
Չյուներդ հայերեն են լալիս,
Նայերեն են հորդում ջրերդ:

Նավերդ երգում են հայերեն,
Խոփերդ հերկում են հայերեն,
Նայերեն են փոկում գրերդ:

Արեղ հայերեն է ծագում,
Ծառերդ հայերեն են ծաղկում,
Նայերեն են պայթում բառերդ:

Նունդերդ ծլում են հայերեն,
Չեռերդ կրում են հայերեն,
Նայերեն են լռում քարերդ:

Չորերդ շնչում են հայերեն,
Չոհերդ ննջում են հայերեն,
Նայերեն են փանջում ցավերդ:

Որքան էլ ձեռից գնացել,
Դու էլի հային ես մնացել,
Նայերեն են հառնում սարերդ:

Թող Աստված եղածը պահի,
Եվ հեփո ինչ էլ պատահի,
Չյուներդ հայերեն են լալու,
Գարունդ հայերեն է գալու,
Նայերեն են գալու դարերդ: